ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 116 – Ա **16 փետրվարի 2022 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 114 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2022 թվականի փետրվարի 15-ի «Գեղարքունիքի մարզպետարանի ապարատի պահպանման ծախսի համար 2022 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցներով ապրանքանյութական արժեքների ձեռք բերման, ծախսման և դրանց հաշվետվողականության օրինականությունն ուսումնասիրելու համար հանձնաժողով ստեղծելու մասին» N 114-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման վերնագրի և 1-ին կետի «2022 թվականի պետական բյուջեով» բառերը փոխարինել «2019, 2020 և 2021 թվականների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով» բառերով:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ